

ճանի նիկողայոս եպիսկոպոսի թէ՛ գրական եւ թէ՛ նիւթեղէն, եւ արձանագրել ի ցուցակի որոշ որոշ, այսինքն պատկանեալս Սրբոյ Աթոռոյն, զորս տարեալ է հանգուցեալն ընդ իւր յեջմիածնայ, նոյնպէս զպատկանեալս Սրբոյ վանիցն Թաղդէոսի առաքելոյ, եւ իւր անձնականն եւ ստորագրութեամբն ձեր ամենեցուն առաքել առ մեզ զցուցակսն, եւ վասն հրովարտակաց Շահից եւ շահագոյնց գրեցաք աղայ Առաքելին Մելիք Մինասեան, գրեմք եւ ձեզ, զի դուք երկոքեանքդ տալիք ընթեռնուլ զայնոսիկ եւ զգործութիւնս նոցա, թէ վասն Երպիսի իրաց են տուեալ ձանուշիք մեզ, եւ դուք ի գործ դիջիք վասն շահաւատութեան վանից, եւ ի ըստանալն ի ձէնջ ծանօթութեանցն մեք եւ Սինօզն էջմիածնի տնօրինեսցուք որ ինչ արժանն է։ Յամի ազգական 1300, եւ փրկչական 1851, Յոգոստոսի 10, ի սուրբ էջմիածին։

հմբ. 291 ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ՍՄ. ՀԱՅՈՑ
ՆԵՐՍԷՍ

(6) Հրատ. Կ. Յ. Բասմաչեան

ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

ԺԹ

Սահակ վարդապետ Ղլմայիկ նիկովի-
դիայե՛ն՝ առ Յակոբ կարողիկոս Զուղայեցի
յեղովիս(*)։

Շնորհափայլ եւ երջանկափառ, մաք-
րափայլ եւ որբասնունդ երկիցս երանեալ եւ
հոգիակիր Տեառն մերոյ սրբազան հայ-
րապետի եւ քաջ հովուապետի ամենայն
հայոց հոգեւոր տէրի յետեալ եւ տարան-
ջատեալ ծառայէ քումմէ Սահակէ սպա-
սաւոր բանի՝ ծուներ իջեալ մատուցանեմ
երկրպագութիւն սուրբ գարշապարտոյդ եւ
համբոյր աստուածացեալ սուրբ աջոյդ եւ

հարցումս որպիսութեան սուրբ հօրդ՝ թէ
ո՛րպէս են կենցաղավարութիւնք եւ կամ
աջօրդմունք Տեառն ի վշտաշատ եւ ի բաղ-
մար ժամանակիս, եւ ես ոչ խնայելով ի
ծերութիւնն եւ տկարութիւնն, այլ բար-
ձեալ ունիս զայսքան անտանելի աշխա-
տանքն եւ չարչարանք վասն սիրոյն Քրիս-
տոսի եւ Սուրբ Աթոռոյն զայրաթի համար։
Խնդրեմք ի յամէնառատ շնորհողէն Քրիս-
տոսէ եւ ի Սուրբ Հոգւոյն որ միշտ հանա-
պազ օգնական եւ ձեռնտու եղիցի յամե-
նայն գործս, իբրեւ զարեգակն ճառագայ-
թեալ պահեսցէ զցանկալիդ հրեղինաց եւ
հողեղինաց ի պարծանս հայկազեան սեռի։

Կիսութիւն տէրութեան քում եղիցի,
հա՛յր սուրբ, զի մեք մեծ պահոց առաջի
երկքշարաթի աւուրն ելաք ի Ստամպուլ
եւ Տեառնընդառաջն ի Պօլի քաղաքն ա-
րարաք. ութն օր ի տեղն նստեցաք, քանզի
այս էր պատճառն՝ զի յորժամ պատերազ-
մեցաք մեք ընդ երուսաղէմացոցն, այսինքն
զԵՌՈՎՆԷՓԻՆ եւ զՔՈՄՈՒՐՏԻԱՆ եւ այլ բազմ-
ամբոխ ժողովրդեանն՝ միայն մնացաք, ի
սեազլխտցն ոչ ոք եղև մեզ օգնական, զի
անիծեալ Տէլի Պիլադարն երկաբնակ եղև,
ամենևին ոչ հաղորդեցաւ ընդ մեզ, եւ Նօ-
խուտչին Պուրսա փախեալ եւ Քաղխուկն
ոչ այսպէս եւ ոչ այնպէս՝ դիտելով կատա-
րածին. այլ մեք տկարքս աղօթիւք սուրբ
հօրդ պատերազմեցաք ընդ հօրան. ապա-
ւինեալ էին երկրորդ Նեոն իւրեանց եղիա-
ղարն, եւ ամենեքեան առին զսակաւ հատու-
ցումն իւրեանց։ Եւ պատրիարքն(*) սկսաւ
ինչ զմեզ նեղացնել, զի ժամանակ մեր
հրաւիրեաց զմեզ սակս էջմիրու առաջնոր-
դութեանն՝ թէ ԵՃ (500) ղու. բե՛ր, քեզ
վերայ պարաթ տնեմ, զնա՛ նիստ, եւ
կամ ի Մարզուան եւ կամ ի յԱնկուրիեայ,
եւ մեք յամենեցունց հրաժարեցաք։ Բա-
զում այլ եւ այլ անասելի գործս հրաւիրեաց
զմեզ, զի յերկարեին ձանձրութիւն է սուրբ
հօրդ, եւ յետոյ կամէր զմեզ ի մէջ փորձա-
նաց ձգել, այսպէս ասելով՝ թէ Լ՛ի ընդ
իս միարանիր, զու նիստ ի տեղս փոխա-
նորդ ինձ, եւ ես գնամ ի վերայ աշխարհի
չըջիմ պարտուցն օգնութեան համար։ Եւ
ի սմանէ ես զերծաք աղօթիւք հօրդ։ Եւ
այլ իմն կերպիւ պատերազմեցաւ՝ թէ ինձ

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վեր-
նագիրն է. «Պատի Ղլմայիկ Սահակի գիրն է առ
Յակոբ կաթողիկոսն գրեալ կեղծաւորաբար»։

(*) Սարգիս Թէքլիտաղցի. Ծ. 2.

երկու քիսա ստակ փոխ տո՛ւր, և թէ չու-
նիս՝ զգրեանք և զգեկստ գրուեա՛ւ, ա՛ռ և
տո՛ւր. և մեք տարակուսեալ մնացաք՝ թէ
որպէս ազատիմք ի նմանէ. և լըւաք ըզ-
գալուստ վեհիդ և զՄարտիրոս վարդապե-
տին, ուրախացեալ բերկրեցաք հոգով եւ
մարմնով, զի յուսահատելոյս և միայն մնա-
ցելոյս օգնական ժամանելոց է. և յետոյ
ասացին թէ վեհն զԶատիկն յԱրդրում առ-
նելոց է և Մարտիրոս վարդապետն՝ ի Թո-
խաթ: Յորժամ զայս լսեցաք, ելեալ զի-
մեցաք ի Թոխաթ, զի Մարտիրոս վարդա-
պետն շուտով առեալ տարայց. և եկաք
մինչ ի Պօլի. ասացին թէ հանգերձ բա-
զում վարդապետօք վեհն գնայ Թօխաթու
ի յԱնկուրիա, և մեք թիւրեցաք զճանա-
պարհն, գնացաք ի յԱնկուրիա, և տեսաք
զՊօղոս վարդապետն ի տեղն, ասացաք՝
թէ Զատիկն ի տեղս են առնելոց: Մինաս
վարդապետն Ղոնիս էր գնացեր, և մեք
կամեցաք ի քաղաքն մտանեմք վասն
պարտուցն մերոց, զի ՃԾ (150) զոչ-
պարտք ունիմք. ճշմարտութիւնն ինքն
Քրիստոս վկայէ, զի յորժամ բաժանեցայ
ի սուրբ հօրէդ մէկ ստակ ի յայլ տեղ ժո-
ղովք չեմ արարեալ, այլ զամենայն ինչ՝
թէ՛ հանգերձ և թէ՛ մեզ կերակուր պար-
տօք է եղեր, քանզի ի Ստամպօլ ոչ իս-
տակ և ոչ կերակուր մեզ ոչ տըւին, ոչ
թէ մեզ՝ այլ և ամենայն սեւագլխացն իս-
պառ հատին զողորմութիւնն և զկերակուրն
այլ, ոչ ընդունելով ի քաղաքն ժամ մի,
այլ ի յետս դարձաք ի վանքն, երեք շա-
բաթ ի տեղն մնացաք զիտելով զալստեան
սուրբ հօրդ: Եւ յաւուր միոյ եկին երկու
մուրացիկ ի Թոխաթու, նոքա երգմամբ
հաստատեցին՝ թէ հոգեւոր տէրն ի Ստամ-
պօլ գնաց, և մեք վասն պակասութեան
իրի գնացաք ի քաղաքն, սակաւ ինչ նըս-
տեցաք ի Սուրբ Քառասունքն. քահանայքն
այն օրն ժամ չասացին՝ թէ վարդապետն
չլինի թէ եկեղեցին մտանէ. այն օրն ա-
ռանց ժամի մնաց ժողովուրդն: Պատճառ
այս բանիս չԳրիգոր էրէցն և չԳասպար
էրէցն և երեցփոխանն: Հրամանքդ ի Թո-
խաթ մեզ նեղացար՝ թէ յարեղայ անուամբ
շրջէիր, քեզ հաց չէին տար, ահա հրա-
մանուց կոնդակովն վարդապետն անուամբ
գնացաք, եկեղեցին ևս չթողին: Մեք ու
գնացաք ի զատու քովն, ասացաք՝ թէ մօ-

լէն յորժամ ի քաղաք ինչ մտանէ, նորա
իջեանքն ի՞նչ տեղ է. ասաց՝ թէ մէջլիտն
է, և հայոցն՝ յեկեղեցին. մեզի մէկ լաւ
ֆաթվա տըւաւ, և մեք տարաք զայն հու-
ճաթ ևս արարաք, որ հուճաթին կօրս
ամբ առնեմք և ապա յետ այնպիսեացն
խօսիմք: Թէ հրամանքդ գնոսա սաստիւ
կու խրատես՝ բարի է, ապա թէ ոչ՝ այլ
կերպիւ գնոսա խրատող կոյ, որ այլ սե-
ւագլխի այնպէս չի առնեն: Գարբիէլ վար-
դապետին ևս արարեալ են այնպէս. և
մեք կամեցաք գնոսա բանիւ առնել, այլ
հրամանուցդ զալստեան սպտեցաք, զի
հրամանքդ գնոսա խրատեցես. և ուղի
անկեալ գնացաք մինչ ի Իզնիմլիտ: Ի տեղս
ասացին՝ թէ հոգեւոր տէրն ի Թոխաթ է
մնացեր և Մարտիրոս վարդապետն ի Ստամ-
պօլ գնաց, և մեք տարակուսեալ մնացաք,
զի զուր եղև այսչափ աշխատանքն մեր
վասն երթեւեկութեան ճանապարհին եւ
ստակ խարճելոյն, ոչ զիտելով թէ զի՛նչ
առնուցեմք: Ահա աղօթիւք սուրբ հօրդ
կամիմք ի ներս մտանել. թէ վասն զոր-
ծոյ ինչ պիտոյ եմք Մարտիրոս վարդա-
պետին՝ բարեօք է, ապա թէ ոչ՝ շուտով
ժամանելոց եմ հրամանուցդ առաջնորդու-
թեամբ Սուրբ Հոգեոյն՝ ուրիւիցէ: Հայր
սուրբ, հրամանքդ մի՛ արտմիր, այլ ու-
րախ լի՛ր, զի ահա անիծեալ Նեոն^(*) և իւր
աշակերտքն իսպառ կորեալ են յորջա իւր-
եանց և ոչ ուրեք երևին. յոյս ունիմք ի
Քրիստոսէ, որ իսպառ կորնչելոց են ամե-
նեքեան, զի ահա այսչափ վարդապետքս
վառեալ կամք ի սէր Սուրբ Աթոռոյդ. ա-
մենեքեան մինչև ի մահ կու աշխատիմք.
Հրամանուցդ աղօթքն մեզ օգնական եւ
պահապան եղիցի միշտ և հանապաղ, ամէն:

Դրեցաւ թվին ՌՃԺԴ (= 1665), ապ-
րիլ ամսոյ ԺԸ. Իզնիմլիտ, աւուր երեքշա-
բաթի:

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

(*) Եղիազար կաթողիկոսին կ'անհարկէ: